ՀԱՀ ՀԱՏՈՒԿ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺԻՆ
«ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ»
ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

27-ը մայիսի, 1999 թ. Թիվ. 2

ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

«Գորդյան հանգույց» ծրագրի հերթական կլոր սեղանի հյուրերն էին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարար Գագիկ Արզումանյանը,

ՀՀ հարկային տեսչության պետի տեղակալ Արմեն Ալավերդյանը,

«Ապավեն» տրանսպորտային հայ-վրացական համատեղ ձեռնարկության նախագահ Արսեն Ղազարյանը

և Հայաստանի վաճառականների միության փոխնախագահ Հովսեփ Պողոսյանը:

«Գորդյան հանգույց» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին
URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝

ՀԱՐԿԱՅԻՆ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայացնելով իրենց տեսակետները քննարկվող թեմայի առնչությամբ, գործարար շրջանակների ներկայացուցիչները մասնավորապես նշեցին, որ, թերևս, կարելի է խոսել ՀՀ հարկային և մաքսային օրենսդրության, սակայն, ոչ՝ համապատասխան քաղաքականության մասին: Եվ սա այն պարզ պատճառով, որ, նրանց համոզմամբ, այդպիսի քաղաքականություն Հայաստանում դեռևս մշակված չէ:

Գործարարների գնահատմամբ, այսօր ձևավորված հարկային ու մաքսային օրենսդրական դաշտն էլ հեռու է բավարար լինելուց և դեռ զգալի բարեփոխումների տեղ ունի: Ըստ Հովսեփ Պողոսյանի, ՀՀ-ում հարկային և մաքսային օրենսդրությունը չի նպաստում գործարարության զարգացմանը: Նրա խոսքերով, գործող օրենքներով աշխատելն ու շահույթ ստանալը Հայաստանում դարձել է անհնար: Արսեն Ղազարյանի կարծիքով, հարկային ու մաքսային օրենսդրության բացթողումները բնական են, քանզի դժվար է անցումային փուլ ապրող նորանկախ Հայաստանում 6-7 տարվա ընթացքում ստեղծել անթերի օրենսդրություն, մի երկրում, որի ամբողջ տնտեսությունը եղել է պետական սեփականություն, կառավարվել է արհեստական օրենքներով, չհիմնավորված բյուջետային ծախսերով, համատարած սոցիալական պատրանքային հավասարության սկզբունքով: Ըստ նրա, առաջին փուլում ՀՀ հարկային օրենսդրությունն ինչ-որ առումով կարելի է համարել համակարգված, քանի որ տնտեսական գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ ստեղծվեցին հարկերի և տուրքերի գանձման կարգ, դրա ձևերին ու մեթոդներին առնչվող նորմատիվային դաշտ: Բնական է, որ այդ օրենսդրությունը բավարար լինել չի կարող, քանզի ՀՀ խորհրդարանն այն ընդունել է նախկին խորհրդային շրջանի, Գերագույն խորհրդի ոճով: Առաջին հերթին Հայաստանում արտատպվել է ռուսական համապատասխան օրենսդրությունը, որոշ նորմատիվային փաստաթղթեր ստացվել են միջազգային կազմակերպությունների երաշխավորությամբ, որոնք փորձ է արվել տեղայնացնել: Արդյունքում, «Ապավենի» նախագահի խոսքերով, մասնավոր սեփականության սաղմերը ստեղծող հասարակության համար ունենք բավականին ծանր հարկային օրենսդրություն: Դեռ շատ վաղ է ասելու, թե Հայաստանում ստեղծված է մասնավոր կապիտալի համակարգ:

«Գործող օրենքներով աշխատելն ու շահույթ ստանալը Հայաստանում դարձել է անհնար:»

(շարունակությունը 2-րդ էջում)

Պրակտիկ գործունեության մեջ գործարարները հաճախ են հանդիպում իրավիճակների, երբ եղած օրենսդրությունը չի նպաստում, ավելին՝ խանգարում է զարգանալուն: Օրվա գերխնդիրը հարկային օրենսդրության կատարելագործումն է: Հասարակությանն անհրաժեշտ է հարստացող տնտեսություն, որին կարող է նպաստել ճկուն հարկային օրենսդրությունը:

Գործարարներն ընդունում են, որ շատ առումներով հայաստանյան օրենսդրական դաշտը ԱՊՀ երկրներից շատերի համեմատ մեղմ է, երբեմն՝ նպաստավոր դրույքաչափերով: Այսուհանդերձ, ստեղծված իրավիճակն աբսուրդի է հասնում, քանզի եղած օրենսդրությունը կայացած, բայց ոչ կայացող տնտեսության համար է: Խոսքը հատկապես վերաբերում է արտադրության, արդյունաբերական ոլորտներին:

Մաքսային համակարգը գործարարների ներկայացուցիչները որակեցին որպես ավելի պրագմատիկ, կիրառական ոլորտ: Նրանց դիտարկումներով, վերջին 2,5 տարվա ընթացքում հաջողվել է 90%-ով հաղթահարել մաքսանենգությունն, ինչը համակարգի կայացման հետևանք է: Այսօր մաքսային տեսուչներն առավելագույնն իրենց դիրքը կարող են չարաշահել մաքսային արժեքի սահմանման հարցերում:

Մաքսային համակարգում առկա թերությունների թվում մասնակիցները նշեցին մաքսային ենթակառուցվածքների բացակայությունը: Ժամանակն է, որ իրականության մեջ կիրառություն ստանան մաքսային պահեստ, մաքսային փոխադրող, մաքսային միջնորդ հասկացությունները, որոնք ընդունված են կայացած համակարգ ունեցող երկրներում: Դրանք թույլ են տալիս մաքսատանն աշխատել ավելի ճկուն, սպասարկումը հասցնել պատվիրատուի դուռը: Այդ օղակները հնարավորություն են տալիս, որ մաքսավորի հետ շփվի ոչ թե կոնկրետ պատվիրատուն իր քսակով և նեղ շահերով, այլ մասնագիրացված ընկերությունները, որոնք արագացնում են մաքսազերծումները, պատասխանատվություն են վերցնում իրենց վրա, ապահովում մաքսային հարկերի երաշխավորված գանձում: Իսկ այս ամենն իրենց հերթին կբերեն ներկրման ծավալների աճի: Ի գիտություն ներկաների, Գագիկ Արզումանյանը նշեց, որ կառավարությունն արդեն հաստատել է մաքսային պահեստների լիցենզավորման կարգը:

Որպես խնդիր առաջացնող հանգամանք գործարարները նշեցին որոշ մաքսավորների անբավարար կրթվածության մակարդակը: Մաքսատներում հաճախ քաշքշուկներ են լինում մաքսավորների չիմացության պատճառով, ուստի զարգացման կարիք կա մաքսային ծառայողների կրթական համակարգում:

Գագիկ Արզումանյանն ու Արմեն Ալավերդյանն ընդհանուր առմամբ համակարծիք էին գործարար աշխարհի ներկայացուցիչների հարցադրումներին: Նրանք հարկային և մաքսային համակարգերի քննադատողներին խորհուրդ տվեցին խնդիրներին ավելի ստույգ ձևակերպումներ տալ, ինչով և կօժանդակեն համակարգերի կատարելանգործման շարունակական գործընթացին: Ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարարն իր անհամաձայնությունն արտահայտեց այն պնդման հետ, թե չկա մշակված հարկային քաղաքականություն կամ, թե կառավարությունը հակված չէ վերանայել եղած գործող համակարգը: Կառավարության իրականացրած ծրագրում կարևոր տեղ է տրված հարկային քաղաքականությանն ու վարչարարությանը: Նա հավաստիացրեց, որ այս ոլորտներում նախանշված քայլերը հիմնականում իրականացվել են: Այս մոտեցումն իր արտացոլումը կգտնի նաև նորընտիր խորհրդարանին ներկայացվելիք կառավարության ծրագրում:

«Եղած օրենսդրությունը կայացած, բայց ոչ կայացող տնտեսության համար է»:

Արմեն Ալավերդյանը համաձայնվեց այն մտքի հետ, թե օրենսդրությունը պետք է լինի ոչ թե կայացած, այլ կայացող տնտեսությանը համարժեք: Այն պետք է ունենա խթանիչ ուղղություններ՝ արտոնություններ տրամադրելով նորաստեղծ փոքր գործարարությանը: Այս առումով նա գործարար շրջանակներին, մասնագիտական հասարակական կազմակերպություններին հրավիրեց համագործակցության:

Բարձրացված հարցերի թվում բուռն քննարկում ծավալվեց հարկային և մաքսային համակարգերում նկատված կաշառակերության երևույթի առնչությամբ: Մասնակիցները եկան այն ընդհանուր հայտարարին, որ սա ընդհանրական, սոցիալական խորն արմատ ունեցող դրսևորում է: Թեժ բանավեճ ծավալվեց հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման կապակցությամբ: Գործադիր գերատեսչությունների ներկայացուցիչներն ընդունեցին, որ ՀԴՄ-ների համատարած, համահարթեցված եղանակով ներդրումն ուներ իր թերությունները, սակայն այն ևս մեկ քայլ էր քիչ թե շատ նվազեցնելու չհաշվառվող դրամական շրջառությունը:

Կլոր սեղանի մասնակիցները պատասխանեցին նաև ներկաների բազմաթիվ հարցերին: